ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների eauction.armeps.am համակարգի միջոցով մեդալների, կրծքանշանների և տուփերի ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԷԱՃԱՊՁԲ-ՄԴԼ-18/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 30.10.2018թ. ժամը 12-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Վ.Հարությունյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Լ.Հովհաննիսյանը, Ա.Թումանյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

1. Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովը, արձանագրելով, որ **Ջուլիես Սիլվեր ՍՊԸ-ն** չի ներկայացրել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերն, և ուսումնասիրելով **Երևանի Ոսկերչական գործարան-1 ԳՆՈՄՈՆ ԲԲԸ-ի** կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերն և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը/ կցվում է/, ներկայացրեց իր կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները՝ eauction.armeps.am համակարգի միջոցով և թղթային /գնահատման թերթիկները կցվում են/, որի հիման վրա որոշեց՝

1. Հաշվի առնելով՝ որ **Ջուլիես Սիլվեր ՍՊԸ-ի** վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ –ի կողմից տրամադրված տեղեկատվությունը համապատասխանում է հրավերի պահանջներին և համակարգում բացակայում են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, 1-5 չափաբաժինների համար հայտը մերժել՝ հրավերի 1-ին մասի 7.10 կետի համաձայն:
2. 1-5 չափաբաժինների համար առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **Երևանի Ոսկերչական գործարան-1 ԳՆՈՄՈՆ ԲԲԸ-ին:**
3. Հաշվի առնելով՝ որ **Երևանի Ոսկերչական գործարան-1 ԳՆՈՄՈՆ ԲԲԸ-ի** վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ –ի կողմից տրամադրված տեղեկատվությունը, ինչպես նաև **Երևանի Ոսկերչական գործարան-1 ԳՆՈՄՈՆ ԲԲԸ-ի** կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին՝ ընթացակարգի 6 չափաբաժնի համար ընտրված մասնակից ճանաչել **Երևանի Ոսկերչական գործարան-1 ԳՆՈՄՈՆ ԲԲԸ-ի -ին:**
4. ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն 6 չափաբաժնի համար հայտարարել անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
5. Անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:
6. 1-5 չափաբաժինների համար փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 22-րդ կետի համաձայն՝ ժամը 12.00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

Կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել 1-5 չափաբաժինների որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված

փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ _____ Վ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Լ.Հովհաննիսյան

_____ Ա.Թումանյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան